Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 60

ք. Երևան **21.06.2017թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/3379-17, ՀՀ բնապահպանության 5/02.2/51175-17, ՀՀ գյուղատնտեսության ԱՀ/ԱԲ-1/5176-17, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/3312-17, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/5725-17 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11.2/3632-17, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/3612-17 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ** համայնքի **Գնդեվազ** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է **Ջերմուկ** համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում պետական սեփականություն հանդիսացող **32.84252 հա (<u>կադաստրային ծածկագրերը կցվում են</u>) և** համայնքի սեփականություն հանդիսացող **42.722535 հա (<u>կադաստրային ծածկագրերը կցվում են</u>)** գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ _Վ. Տերտերյան

քարտուղար՝ _Ռ. Մինասյան